Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԿՆ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 4. Երևան - 4 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025 – 31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01. 10.2025 - 31.12. 2025թթ. |
| Ներկայացման օր | 16.15.2025թ. |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են՝

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

1. **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 75 շահառուի Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքներում: Սոցիալական աշխատողի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է 5 դեպքի վարում՝ տարեկան վերափաստագրման 3 դեպք. թվով 2 շահառու ստացել է նոր անձնագիր: Եռամսյակի ընթացքում միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնից ձեռք է բերվել թվով 2 շահառուների համար միավորների տեղեկանք՝ դեղերի ստացման, բժշկական կենտրոններում անվճար հետազոտություններ անցնելու համար և այլն: Սոցիալական աշխատողը թվով 18 շահառուի միջնորդել և ուղղորդել է միասնական սոցիալական ծառայություն՝ օժանդակ պարագաների ձեռք բերման նպատակով, կենսաթոշակի վերահաստատումը կազմակերպելու նպատակով, սոցիալական ապահովության համակարգում ընդգրկվելու նպատակով, և այլն: Թվով 1 շահառուների համար կատարվել է գնումների և վճարումների իրականացում, բջջային հեռախոսի լիցքավորում: 2 շահառուի Կազմակերպության կողմից ժամանակավոր տրամադրվել է սայլակ: Թվով 5 շահառուի տրամադրվել է հիգիենիկ պարագաների փաթեթ Կազմակերպության կողմից: Սոց աշխատողը «Ակադեմիա սլուխ» կենտրոնից 1 շահառուի համար գնել է լսողական սարքի մարտկոցներ և հանձնել շահառուին: 3 շահառուներ ունեցել են հոսանքի գերածախս, սոցիալական աշխատողը ՍՍԾ դիմում է ներկայացրել՝ նշելով գերածախսի պատճառները՝ նպաստները չդադարեցնելու նպատակով:

   Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 4 շահառուի հոգեբանի կողմից պարբերաբար տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի ինքնասպասարկման կարողությունների զարգացմանը, հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, հիշողության ամրապնդմանը, սթրեսակայունության ձևավորմանը, պահպանմանը, անձի հուզական և մտավոր ունակությունների ու հմտությունների զարգացման ու ճգնաժամային իրավիճակներին համապատասխան վարքի դրսևորման հնարավորությունների ստեղծմանը:

Խորհրդատվական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:

Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է 3 միջոցառում, որոնց մասնակցել է թվով 2 շահառու՝

- «Նունենի» ցերեկային կենտրոնում կայացավ տարեցների միջազգային օրվան նվիրված «Տարիքը կյանքի պարգև է» խորագրով միջոցառում. որին մասնակցել է տնային խնամքի ծառայություն ստացող 1 շահառու:
- տնային խնամքի 2 շահառու մասնակցել են էքսկուրսիային դեպի Ապարան, Տառերի պուրակ, Դրաստամատ Կանայանի հուշարձան, Սուրբ Խաչ եկեղեցի, Ակութ հացատուն:
- տնային խնամքի 2 շահառու մասնակցել են էքսկուրսիային դեպի Վաղարշապատ, «Սուրբ Հռիփսիմե» եկեղեցի, այնուհետև «Նոյի Իջևան» մշակութային այգի, հետո «Էջմիածին» հացատուն՝ օրն ամփոփելով «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին»:

- **Կենցաղային սպասարկման և խնամքի ծառայության տրամադրման** շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում աջակցություն է տրամադրվել 75 շահառուի: Յուրաքանչյուրին իր գնահատված կարիքից և ինքնասպասարկման կարողությունից ելնելով աջակցություն է տրամադրվել բնակարանի մաքրության և անձնական հիգիենայի պահպանման հարցում, գնումների կոմունալ վարձավճարների իրականացման, սննդի կազմակերպման, բարեգործական ճաշարանից կերակրի տուն բերման, անհրաժեշտության դեպքում՝ կերակրման հարցում: Անհրաժեշտության դեպքում իրականացվել է ուղեկցում՝ գնումների, զբոսանքի կամ շահառուի կարիքի բավարարման նպատակով համապատասխանաբար այլ վայր:
- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 75 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 34 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար դեղորայք: 13 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով, այդ թվում նեղ մասնագետների մոտ, «Ավագյան» կենտրոն, «Վարդանանց» կենտրոն, «Էրեբունի» ԲԿ, «Աստղիկ» ԲԿ, շահառուներ կան, որ եռամսյակը մի քանի անգամ ուղեկցվել են տարբեր բժշկական հաստատություններ, ատամնաբուժարան, տարբեր պոլիկլինիկաներ: 5 շահառուի համար բուժքրոջ կողմից կատարվել է տնային պայմաններում հետազոտությունների իրականացման կազմակերպում, 3 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա, 6 շահառուի համար կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական): Թվով 2 շահառուի համար կատարվել է վերքի մշակում, վիրակապում: Թվով 2 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի առկայությամբ: Թվով 4 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ (շարունակական), թվով 3 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք, թվով 2 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է վերջիններիս հսկող բժշկի կողմից նշանակված դեղորայքային բուժման դեղատոմսը և հանձնվել շահառուներին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութերը.

1. «Նունենի» ցերեկային կենտրոնում կայացավ տարեցների միջազգային օրվան նվիրված «Տարիքը կյանքի պարգև է» խորագրով միջոցառում: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://surli.cc/fvw pp](https://surli.cc/fvw pp)):
2. Էքսկուրսիա դեպի Ապարան, Տառերի պուրակ, Դրաստամատ Կանայանի հուշարձան, Սուրբ Խաչ եկեղեցի, Ակութ հացատուն: (տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://surl.li/hmufiq](https://surl.li/hmufiq)):
3. «Նունենի» ցերեկային կենտրոնի ավագ սերնդի ներկայացուցիչների այցը դեպի Վաղարշապատ. «Սուրբ Հռիփսիմե» եկեղեցի. այնուհետև «Նոյի Իշխան» մշակութային այգի. «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին»:(տե՛ս հետևյալ հղմամբ՝ [https://surl.li/ovoezv](https://surl.li/ovoezv)):

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

- ✓ Կենտրոն վարչական շրջանի տնային սպասարկման սոցիալական աշխատողները մասնակցել են ՄՍԾ խորհրդատվական նիստին:
- ✓ Հոգեբանը սեփական նախաձեռնությամբ մասնակցել է (2 ժամ) անհատական սուպերվիզիայի և հուզական այրման կանխարգելմանն ուղղված բալինտյան խմբային աշխատանքի (2 ժամ):
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի աշխատակազմի համար կազմակերպվել է երկօրյա սեմինար-պարապմունքներ՝ «Արտակարգ իրավիճակներում վարվելակերպի կանոնները» թեմայով:
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցել է անկախ կյանքի փորձագետ Ինես Րուլիչի հետ քննարկմանը: Հանդիպման ընթացքում քննարկվել են ներկա իրավիճակում հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի սկզբունքներին համահունչ հնարավոր լուծումները, որոնք կհամապատասխանեն նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին:

- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և ծառայությունների վերաբերյալ ազգային կոնֆերանսի», որը կազմակերպվել էր «Ագաթ» ՀԿ-ի կողմից՝ ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց հավասարության և մատչելիության ապահովում» ծրագրի շրջանակում:
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցել է սոցիալական ծառայությունների համակարգողի կողմից կազմակերպված «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» նախարարի հրամանի նախագծի քննարկմանը:
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցում է առցանց պաշտպանվածության/ սեյֆգարդինգի հետ կապված դեպքերի քննության ընթացակարգի վերաբերյալ դասընթացներին:
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցել է «Տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող խնամքի/ բացառությամբ խնամատար ընտանիքներում կամ հոգաբարձուի ընտանիքում իրականացվող խնամքի/ տրամադրման նվազագույն չափորոշիչները հաստատելու մասին» Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի շուրջ հանրային քննարկմանը:
- ✓ «Նունենի» համայնքային կենտրոնի թիմ լիդերը մասնակցել է  համայնքային փոքր տների, ինչպես նաև տնային խնամքի ծառայությունների չափորոշիչներին վերաբերող առցանց քննարկմանը:
- ✓ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ բոլոր կենտրոնների աշխատակիցները  մասնակցել են. PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները: Նորարարական մոտեցումները տարեցների եւ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 75/75 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 65 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 4 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 3 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 0 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 4 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 71 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 6<br>Բ - 68 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 75 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 75 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 75 |
| 5.1 | այդ թվում՝ թվով 3 մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 2 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 10 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 4 |

Կազմակերպության ղեկավար *Երվանդ Մխիթարյան* «15» 12. 2025թ